## Դաս 25. Քրիստոնեության ընդունումը: Առաքյալներ



### Անիի Մայր տաճարը

*Հայոց Անի քաղաքը համարվում էր հազար ու մեկ եկեղեցիների մայրաքաղաք: Այն հռչակված է եղել բազմաթիվ եկեղեցիներով, սակայն Անիի եկեղեցիների թագուհին Մայր տաճարն է՝ Սուրբ Կաթողիկեն: Շատ ճարտարապետներ ու պատմաբաններ այն համարում են Կովկասի ճարտարապետության զարդը: Եկեղեցին նվիրված է Աստվածածնին: Տաճարի կառուցումը տևել է 20 տարի, որը հովանավորել է հայոց Կատրանիդե թագուհին: Ասում են՝ շինարարության գործն ավարտին հասցնելու համար քրիստոնեապաշտ Կատրանիդեն չի խնայել անգամ հարսանեկան իր օժիտն ու նվերները:*

*Առասպելը պատմում է, որ Կատրանիդե թագուհուն երազում հայտնված հրեշտակն է հուշել հովանավորել տաճարի կառուցումը: Հրեշտակը թագուհուն խոստացել է, որ կառույցի շինարարության ընթացքում չի լքի և այնքան ժամանակ կպահպանի եկեղեցին, մինչև արաբները փեսնեն Քրիստոսի գալուստը:*

*Սա, իհարկե, առասպել է, սակայն ո՞վ իմանա, գուցե հենց Կատրանիդե թագուհու հրեշտակն է պահպանում եկեղեցին չարիքից, երկրաշարժերից ու թուրքերի ավերլությունից:*



*Անիի Սուրբ Աստվածածին Կաթողիկե եկեղեցի*